Գործ ԵԴ թիվ 2173/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

19 հունվարի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի <<Ռաֆ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Ռաֆ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթի գնահատող հանձնաժողովին «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով փակ նպատակային մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 1-ին չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Բուլդոզեր բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-9 մոդելի բուլդոզերը:» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բուլդոզեր բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի D-275 մոդելի կամ համարժեք:»,

բ. 2-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Բուլդոզեր KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի, որին համարժեք է համարվում CAT ֆիրմայի D-6 մոդելի բուլդոզերը:» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բուլդոզեր KOMATSU ֆիրմայի D-65 մոդելի կամ համարժեք:»,

գ. 3-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Էքսկավատորներ բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO մոդելի, որին համարժեք են համարվում CAT ֆիրմայի CAT330 մոդելի և HYINDAI ֆիրմայի HX300SL մոդելի էքսկավատորները:» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Էքսկավատորներ բարձր արտադրողականության KOMATSU ֆիրմայի PC300-8MO մոդելի կամ համարժեք:»,

դ. 4-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրի առաջին տողը՝ «Էքսկավատորներ միջին արտադրողականության KOMATSU ֆիրմայի WB93S մոդելի, որին համարժեք են համարվում CAT ֆիրմայի CAT434F2 մոդելի և JCB ֆիրմայի 4CX մոդելի էքսկավատորները:» շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Էքսկավատորներ միջին արտադրողականության KOMATSU ֆիրմայի WB93S մոդելի կամ համարժեք:»:

Միաժամանակ <<ՌաՖ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը միջնորդել է սույն գործը քննել դատական նիստում՝ նկատի ունենալով, որ հայցվորն իր խախտված իրավունքներն ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստում:

Հայցադիմումը 13.01.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 16.01.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտնի դարձված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ <<Ռաֆ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա է բավարարման, և սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. <<Ռաֆ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից պահանջել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. <<Ռաֆ-Օջախ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարել.

ԵԴ թիվ 2173/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի մարտի 29-ին, ժամը 13:15-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշանակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**